«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչականաշխատանքների պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի համապատասխան.

Դաստիարակ՝ Մելքումովա Լիլիա

Մանկապարտեզ՝ «Ալվինկա զարգացման կենտրոն» **ՀՈԱԿ**

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ……..……..…3-4

ԳԼՈՒԽ 1

«Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան»…… 5-6-7-8-9

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ հիմքունքները ……..10-11

Ուսումնական գործընթացի պլանավորման անհրաժեշտությունը նախադպրոցական ուսումնական հաստատությունում……12-13

Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարը պարտավոր…..……..……..…14-15-16

ԳԼՈՒԽ 2

Գործնական աշխատանք ……16

Եզրակացություն …… .17

Գրականության ցանկ ……..…18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել նախադպրոցական մանկավարժական աշխատողի կողմից ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան ուսումնական պարապմունքների պլանավորման ու անցկացման կարևորության շեշտադրումը, քանի որ նախադպրոցական կրթության պետական չափորոշիչն այն հիմնական ուղեցույցն է, որի պահանջների համապատասխան պետք է պլանավորվի ուսումնական պարապմունքը նախադպրոցական ուսումնական հաստատությունում: Չափորոշչում հստակ ամրագրված են նախադպրոցականի կրթության ու զարգացման համար անհրաժեշտ բոլոր պահանջները, ինչպես նաև պարտադիր կարողունակությունները, որոնց պետք է տիրապետի երեխան, ուստի յուրաքանչյուն մանկավարժական աշխատող, ուսումնական պարապմունքը պլանավորելիս, պետք է անպայման պահպանի նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշշային պահանջները, որպեսզի կարողանա ունենալ համապատասխան վերջնարդյունքներ: Հենց այս հիմնախնդրով էլ պայմանավորված է սույն հետազոտության թեմայի արդիականությունը:

Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Այն ամբողջական գործընթաց է, որն ուղղված է նախադպրոցական տարիքի երեխայի համակողմանի զարգացման ապահովմանը՝ նրա նախասիրություններին, ունակություններին, կարողություններին, անհատական, հոգեկան և ֆիզիկական առանձնահատկություններին համապատասխան: Նախադպրոցական ուսումնական հաստատությունը պատասխանատվություն է կրում երեխայի բնականոն զարգացման համար, ինչն էլ հիմք է հանդիսանում, որ դեպի դպրոց երեխայի անցումը լինի սահուն և հեշտ: Կարևոր հանգամանք է նաև, որ նախադպրոցական մանկավարժական աշխատողը իրազեկ լինի կրթության

պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանած իր պաշտոնային պարտականություններին և «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքներին ու պարտականություններին: Այս ամենը հենց այն հիմքերն են, որ նախադպրոցական տարիքի երեխան մանկապարտեզում կլինի ապահով, կստանա տարիքային առանձնահատկություններով պայմանավորված գիտելիքներ, հմտություններ, կարողունակություններ և դաստիարակություն: Բացի դա, մանկավարժների անմիջական պարտականությունն է նաև հաշվի առնել, որ յուրաքանչյուր երեխա յուրովի է ընկալում սովորական միջավայրը. ոմանք կարողանում են շատ արագ ընտելանալ նոր պահանջներին ու պայմաններին, նոր մարդկանց ու սովորույթներին, սակայն կան երեխաներ, որոնց համար իրենց սովորական առօրյայի անգամ աննշան փոփոխությունը սթրեսային է և լարվածություն է առաջացնում նրանց վարքագծում, ընկալումներում: Այսպիսով, իր աշխատանքային գործունեության ընթացքում նախադպրոցական մանկավարժը պարտավոր է պահպանել աշխատանքի նկարագրի պահանջները՝լիովին պատասխանատվություն կրելով սանի առողջության, զարգացման համար:

Հետազոտության նպատակը: հետազոտության նպատակն է ուսումնասիրել նախադպրոցական մանկավարժական աշխատողի կողմից ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորուման ու իրականցման հիմնախնդիրները՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան:

Հետազոտության խնդիրը: Դիտարկել այն արդյունավետ եղանակներն ու մեթոդները, որոնց միջոցով նախադպրոցական ուսումնական հաստատությունում մանկավարժական աշխատողը կարող է պլանավորել և անցկացնել նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան ուսումնական պարապմունքներ, հանդեսներ և այլ միջոցառումներ:

ԳԼՈՒԽ 1. «Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան»

Նախադպրոցական կրթության հիմնական նպատակներն են.

- երեխայի ֆիզիկական, բարոյական և հոգեկան առողջության պահպանումը և ամրապնդումը,
- նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը
- դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը:

1.1 Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Նախադպրոցական կրթությունն ամբողջական գործընթաց է, որն ուղղված է՝ա) նախադպրոցական տարիքի երեխայի բազմակողմանի զարգացման ապահովմանը՝ նրա հակումներին, ընդունակություններին, կարողություններին, անհատական, հոգեկան և ֆիզիկական առանձնահատկություններին համապատասխան.բ) նախադպրոցական տարիքի երեխայի մեջ վարվելակերպի տարրական նորմերի ձևավորմանը («Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, Երևան, 2005):
Նախադպրոցական կրթության ծրագրերի իրականացման գործում գլխավոր դերը պետությունը վերապահում է ընտանիքին՝ պարտավորվելով պայմաններ ստեղծել ընտանիքում երեխաների համակողմանի զարգացման և խնամքի կազմակերպման համար: Ընտանիքին աջակցելու համար պետությունը ստեղծում է նախադպրոցական հիմնարկներ՝ մսուրներ (2-3 տարեկան երեխաների համար), մանկապարտեզներ (3-6 տարեկանների համար), մսուր-մանկապարտեզներ (միացյալ): Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել նախադպրոցական մանկավարժական աշխատողի կողմից ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան ուսումնական պարապմունքների պլանավորման ու անցկացման կարևորության շեշտադրումը, քանի որ նախադպրոցական կրթության պետական չափորոշիչն այն հիմնական ուղեցույցն է, որի պահանջների համապատասխան պետք է պլանավորվի ուսումնական պարապմունքը նախադպրոցական ուսումնական հաստատությունում: Չափորոշչում հստակ ամրագրված են նախադպրոցականի կրթության ու զարգացման համար անհրաժեշտ բոլոր պահանջները, ինչպես նաև պարտադիր կարողունակությունները, որոնց պետք է տիրապետի երեխան, ուստի յուրաքանչյուն մանկավարժական աշխատող, ուսումնական պարապմունքը պլանավորելիս, պետք է անպայման պահպանի նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչային պահանջները, որպեսզի կարողանա ունենալ

համապատասխան վերջնարդյունքներ: Հենց այս հիմնախնդրով էլ պայմանավորված է սույն հետազոտության թեմայի արդիականությունը: Նախադպրոցական ուսումնական հաստատությունում կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացման, նախադպրոցական կրթական չափորոշչային պահանջների բավարարման, պարապմունքների մեթոդական հագեցվածության ու մանկավարժական էթիկայի պահպանման համար պատասխանատու են բոլոր նախադպրոցական մանկավարժական աշխատողները: Նրանց գործառույթն է նաև երեխաների հետ կատարել զարգացնող և դաստիարակչական աշխատանք, ամենօրյա աշխատանքում հաշվի առնել սաների անհատական առանձնահատկությունները, նրբանկատություն և համբերություն ցուցաբերել նախադպրոցականների, նրանց ծնողների և գործընկերների հետ շփվելիս: Յուրաքնաչյուր մանկավարժ պետք է կարողանա պայմաններ ստեղծել երեխաների լիարժեք զարգացման և կրթության համար: Նախադպրոցական մանկավարժների պաշտոնային պարտականությունները հստակ սահմանված են կրթության պետական կառավարման լիազորված մարմինի կողմից, և յուրաքանչյուր մանկավարժ պարտավոր է հաշվի նստել այդ պարտականությունների հետ: Այս կամ այն խմբի դաստիարակը անմիջական պատասխանատվություն է կրում կոնկրետ ուսումնական պարապմունքի պլանավորման ու անցկացման համար: «Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակը՝ պլանավորում և իրականացնում է սաների ուսուցումն ու դաստիարակությունը, կենսագործունեությունը, նախադպրոցական կրթության պետական չափորոշիչներին, կրթական ծրագրերին համապատասխան, կատարում է ամենօրյա աշխատանք նրանց սոցիալ-հոգեբանական վերականգնման և հարմարունակության (ադապտացիայի) համար, սաների անհատական առանձնահատկությունների ուսումնասիրման և հոգեբանի հանձնարարականի վրա պլանավորում և անցկացնում է նրանց հետ շտկողական, զարգացման աշխատանք, բժշկական աշխատողների հետ համատեղ ապահովում է սաների առողջության պահպանումը և ամրապնդումը, անցկացնում նրանց հոգեբանաֆիզիկական զարգացումը խթանող միջոցներ, պատասխանատու է նրանց կյանքի և առողջության համար, կազմակերպում է սաների օրվա ռեժիմը, օգնում է գեղագիտական, մարզական տարաբնույթ սեկցիաներում ուսուցման, ժամանցի կազմակերպմանը և լրացուցիչ կրթություն ստանալուն և այլն»: Անչափ կարևոր է, որ նախադպրոցական մանկավարժները ունենան մարդկային բարձր որակներ, ինչը ենթադրում է հարգալից վերաբերմունք յուրաքանչյուր երեխայի նկատմամբ, մանկավարժական տակտի դրսևորում երեխաների հետ շփվելիս, հանդուրժողականություն և հավասարության սկզբունքի պահպանում: Այստեղ առանցքային է նախադպրոցականի տարիքային առանձնահատկությունների հաշվի առնումը: Դաստիարակն առաջին հերթին այն մարդն է, ով մշտապես երեխաների կողքին է՝ խմբում, զբոսանքի, ճաշի և քնի ժամանակ: Ամեն րոպե և վայրկյան նա պետք է մանրակրկիտ վերահսկի նրանց բարեկեցությունն ու անվտանգությունը, անշուշտ այս ամենով դաստիարակի պարտականությունները չեն սպառվում: Նա երեխաների հետ վարում է զարգացման գործողություններ, կարդում և պատմում է նրանց հեքիաթները, վերահսկում է կարգուկանոնը և կարգապահությունը խմբում, ակտիվորեն մասնակցում է ցերեկույթների,

հանդեսների կազմակերպմանը և անցկացմանը: Դաստիարակը նաև ծրագրում և կազմակերպում է երեխաների համար խաղեր, ինքնուրույն գործունեություն և ժամանց: Եվ որպեսզի դաստիարակը կարողանա հեշտ կառավարել սաներին, շատ կարևոր է, որ ուսումնական պարապմունքները պլանավորի ժամանակակից մեթոդներով, նորարարական տեխնոլոգիաներով: Նախադպրոցականների հետ տարվող ուսուցման ու զարգացման ոլորտները տարբեր են, այնուամենայնիվ, անկյունաքարային են հետևյալ հիմնական թեմաները՝

• Անձնային, սոցիալական, տնտեսական և էմոցիոնալ զարգացում

• Ստեղծագործական և գեղագիտական զարգացում

• Մաթեմատիկական իրազեկում

• Ֆիզիկական զարգացում, ֆիզիկական առողջություն

• Խաղ, ժամանց

• Թիմային աշխատանք

• Ինքնասպասարկման հմտություններ

• Հաղորդակցման հմտություններ, եկխոսելու, մենախոսելու կարողություն

• Գիտական մտածողություն

• Գրագիտություն

Ուսումնական պարապմունքների ժամանակ հարկավոր է երեխաներին չդնել կաղապարների մեջ, թույլ տալ ինքնաարտահայտման, սեփական կարծիքն անկաշկանդ արտահայտելու: Նկարչության, երաժշտության, մաթեմատիկայի պարապմունքների ժամանակ ևս հարկավոր է խրախուսել երեխաների ինքնուրույն խոսքը, ստեղծագործականությունը, նախառեռնողականությունը, տրամաբանական մտածողությունը, քանի որ հենց նման կերպ կարելի է հիմք նախապատրաստել, որ նախադպրոցականը կարողանա սոցիալականացվել, դրսևորվել: Այս ամենը ճիշտ կազմակերպելու և իրականացնելու համար, հարկավոր է, որ մանկավարժման աշատողները քաջածանոթ լինեն նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչային պահանջներին, որը հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը:Նախադպրոցական կրթության

համակարգը պետք է ուղղված լինի ոչ միայն գիտելիքներով հարուստ, մտավոր գործունեության ընդունակ երեխայի զարգացմանը, այլև նրա անձնային հիմնարար որակների և սոցիալական հմտությունների զարգացմանը: Նախադպրոցական տարիքն առաջին հերթին երեխայի անձնավորության կայացման կարևորագույն շրջանն է:Այս տարիքում երեխայի անձի ձևավորման և զարգացման մեջ էական նշանակություն ունեն խոսքի և հաղորդակցության զարգացումը: Սրանք երեխայի զարգացման ամենակարևոր գրավականներն են, որոնք թույլ են տալիս կյանքը նոր ճանաչող անհատին լիարժեք շփման մեջ մտնել շրջապատի հետ, հասակակիցների և մեծահասակների հետ համատեղ հետաքրքրություններ, կարողություններ, հմտություններ ձեռք բերել ու դրանք կիրառել: Հասարակության մեջ իր տեղը գտնելու համար երեխան պետք է արդյունավետ հաղորդակցվել սովորի: Խոսել սովորելով՝ երեխան նախ շփվում է ծնողների, այնուհետև նաև այլ մարդկանց հետ, սովորում է հաղորդակցվել համատեղ գործունեության ընթացքում: Այդ համատեղ գործունեությունը կարող է լինել խաղ, ուսում, իր ուժերի չափով աշխատանք: Այդ ամենի ընթացքում երեխան յուրացնում է իր միջավայրի սոցիալական փորձը, հասկանում է, թե ինչը ինչպես է արվում, սովորում է վարքի ու գործունեության նորմերն ու կանոնները, այսինքն՝ հասկանում է, թե ինչ կարելի է անել, իսկ ինչ՝ ոչ, ում հետ ինչպես կարելի է վարվել, որտեղ իրեն ինչպես պիտի պահի և այլն: Սոցիալականացումը երեխայի կողմից շրջապատի սոցիալական նորմերի յուրացման գործընթացն է: Ուստի այս պարագայում նույնպես կարևոր է դաստիարակի կողմից նպատակային և արդյունավետ պլանավորված քայլերը: Խոսքի զարգացման խնդիրների մեջ իր առանձնահատուկ տեղն ունի գեղարվեստական խոսքի հետ երեխայի ծանոթացումը՝ որպես երեխայի խոսքի հարստացման աղբյուրի: Գեղարվեստական դաստիարակությունը նպաստում է նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանն ու զգայականի փորձի հարստացմանը, իմացական գործընթացի ակտիվացմանը: Այս պարագայում տեղին է նախադպրոցականի համար շատ ընթերցել, թույլ տալ, որ վերջինս ակտիվ մեկնաբանի հեքիաթը, առակը, պատմությունն ու բանաստեղծությունը: Այսպես զարգանում է նախադպրոցականի ակտիվ խոսքը: «Ակտիվ խոսքի կարողությունները պայմանավորված են աստիճանաբար հարստացող պասիվ բառապաշարով, որը զգալի հզոր է ակտիվից: Խոսքի ձևավորումը վաղ տարիքում ընթանում է հետևյալ հաջորդականությամբ. Ընկալվում և յուրացվում է բառի իմաստային նշանակությունը, այդ բառերն իրենց տեղն են գտնումերեխայի պասիվ բառապաշարում, որից հետո դրանք ակտիվանում են»: Շատ նախադպրոցականների մոտ խոսքը անվստահ է, հաճախ ոչ ամբողջական ու մեխանիկական, ուստի և մանկավարժն իր հնարներով ու մի շարք մեթոդական գործիքներով կարող է խթանել կապակցված խոսքի բնականոն զարգացմանը: Աներկբա է, որ այս փուլում երեխան ունի այդ օգնության կարիքը: Լեզվի միջոցով է, որ երեխան բնության ու հասարակության մասին ստանում է այն տեղեկություններն ու գիտելիքները, որոնք անհրաժեշտ են բնության ու հասարակության մեջ ապրելու, աշխատելու և պայքարելու համար: Երեխայի մայրենի լեզվի ուսուցման և խոսքի զարգացման հիմնական նպատակներից է նաև շրջապատի հետ խոսքային հաղորդակցման ունակությունների ձեռքբերումն ու բանավոր խոսքի զարգացումը: Խոսքի զարգացման հիմնական խնդիրներից են ճիշտ արտահայտվելու

կարողությունը, բանավոր խեսքի հարուստ բովանդակությունը: Նախադպրոցականի մոտ կապակցված խոսք և հաղորդակցվելու կարողություն ձևավորելու կարևորությունը սահմանված է նաև նախադպրոցական կրթության պետական չափորոշրով, ուստի և դաստիարակը պետք է մեծ ուշադրություն դարձնի սաների լեզվական և հաղորդակցական կարողունակության զարգացմանը, որի դեպքում երեխան տիրապետում է գրական հայերենին, հաղորդակցվում տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորում խոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին: Ընդունակ է ճանաչել բանավոր ներկայացվող երևույթները, ըմբռնել, նկարագրել, մեկնաբանել դրանք, ներկայացնել բացատրություններ: Երեխան ունակ է կողմնորոշվել լեզվական միավորներում՝ հնչյուն, բառ, նախադասություն, ունի տարրական պատկերացումներ վանկի, հնչյունի և տառի մասին, ինքնուրույն ձևակերպում է սեփական մտքերը՝ ազատ և կապակցված արտահայտելով կարծիք, վերաբերմունք որևէ երևույթի մասին: Այլ մարդկանց հետ հաղորդակցության մեջ պատկերացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը և մեծահասակների օգնությամբ կիրառում դրանք:Այսպիոսվ, կարող ենք արձանագրել, որ նախադպրոցականի արդյունավետ կրթությունն ու զարգացումը մանկապարտեզում մեծապես կախված է մանկավարժական բոլոր աշխատողների մարդկային, մասնագիտական որակներից, նաև իրենց գործառույթներն ու պարտավորությունն իմանալուց

1.2 Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ հիմքունքները

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հիմքում նախադպրոցականների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումներն են, որոնք ներառում են ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները: Չափորոշչում հաստակ ամրագրված են ուսումնական պարապմունքների, դրանց բովանդակության, ծանրաբեռնվածության, երեխաների հետ տարվող աշխատանքների, մշտադիտարկումների ու կարիքների գնահատման երեխաների մասին դրույթներ: «Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը. հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը»: Նախադպրոցական կրթությունը երեխայի իմացական ոլորտը զարգացնելու գործառույթից զատ պետք է զբաղվի նաև վերջինիս մոտ առանցքային կարողունակությունների ձևավորմամբ: Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչում հստակ սահմանված են նախադպրոցական տարիքի երեխաների ակնկալվող կարողունակությունները: «Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են: Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են

ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով»: ախադպրոցական կրթության կարողունակություններն են՝

1) լեզվական և հաղորդակցական կարողունակություն

2) ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն

3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն

5) թվային և մեդիա կարողունակություն

6) մշակութային կարողունակություն

7) մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն

8) տնտեսական կարողունակություն

9) ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն:

Ըստ էության այս կարողունակություններն ունեն ոլորտային ուղղվածություն, սակայն հարկ է նկատել, որ ուսուցման ու զարգացման գործընթացում դրանք մեկ ամբողջություն են, քանի որ մեկը լրացնում է մյուսին, դառնում շարունակողն ու ամբողջացնողը: Լեզվական և հաղորդակցական կարողունակության ձևավորմամբ խթանվում է նախադպրոցականի կապակցված խոսքը, երկխոսել և մենախոսելու կարողությունը, ինչն էլ սոցիալականացման հենքն է: Ստացվում է, որ այս կարողունակության ձևավորմամբ խթանվում է նայն մյուս կարողունակությունների ձևավորումը: Նախադպրոցականի համար սահմանված կրթական ու զարգացման ոլորտներից բացի չափորոշչում ամրագրված են դրանցից ակնկալվող երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները՝ ըստ նախադպրոցական տարիքի փուլերի: Նախադպրոցական կրթության բովանդակությունն իրենից ներկայացնում է նախադպրոցականների տարիքային առանձնահատկություններին համապատասխան զարգացման և կրթական ընդհանուր նպատակներից բխող գիտելիքների, կարողությունների, հմտությունների նաև արժեքային համակարգի ձևավորում:

«Նախադպրոցական տարիքի երեխաների կրթության բովանդակությունը հիմնականում ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

1) շարժողական ոլորտ.

2) խոսքի և հաղորդակցական ոլորտ.

3) հուզական, սոցիալ-անձնային ոլորտ.

4) իմացական ոլորտ.

5) ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ»:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ յուրաքանչյուր ուսումնական պարապմունքի պլանավորման հենքը չափորոշիչն է: Դրանում ամրագրված դրույթներն ու սկզբունքները պարտադիր են նախադպրոցական կրթության պլանավորման համար: Յուրաքանչյուր ուսումնական պարապմունքի, նպատակային էքսկուրսիայի կամ տոնակատարության նպատակը պետք է բխի նախադպրոցական տարիքի երեխաների կրթության բովանդակությունից, վերջինների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վերջնարդյունքներն ունենալու ակնկալիքվ:Կրթության ու զարգացման ընթացքը պետք է լինի երեխայակենտրոն, հաշվի առնվեն նրանց հետ տարվող անհատակողմներեշիչ աշխատանքների ու մշտադիտարկումների արդյունքները: Երեխաները պետք է բնականոն ինտեգրվոն սոցիալական միջավայրին, ունենան տարիքային առանձնահատկություններով պայմանավորված կապակցված, ֆիզիկական պատրաստվածություն, իմանան ու ճանաչեն ազգային ավանդույթներն ու իրազեկ լինեն համամարդկային արժեքներին, ունենան տրամաբանական ու ստեղծագործական մտածողություն:

Այս ամենն ապահովելու համար նախադպրոցական մանկավարժական աշխատողները պետք է կիրառեն ժամանակակից մեթոդամանյավարժական մոտեցումներ, ունենան մասնագիտական աճ, ինքնակրթվեն և արդյունավետ համագործակցեն միմյանց հետ:

1.3 Ուսումնական գործընթացի պլանավորման անհրաժեշտությունը նախադպրոցական ուսումնական հաստատությունում

Նախադպրոցական ուսումնական հաստատության արդյունավետ կառավարումը ենթադրում է առողջ ստեղծագործական միջավայրի ստեղծում աշխատանքային բարձր արդյունքներ ունեցող թիմում և ուղղակիորեն կախված է ղեկավարի կողմից ընտրված կառավարման ոճից: Յուրաքանչյուր մենեջեր ղեկավար գործունեության մեջ կատարում է ծառայողական պարտականություններ միայն իրեն բնորոշ որոշակի ոճով: Առաջնորդության ոճը արտահայտվում է այն մեթոդներով, որոնք առաջնորդը խրախուսում է թիմին ակտիվորեն և ստեղծագործաբար կատարել իրեն վերապահված պարտականությունները, ինչպես է նա վերահսկում ենթակաների աշխատանքը: Այս ուսումնասիրությունը նվիրված էր հրատապ խնդրի. Թիմում առկա սոցիալ-հոգեբանական մթնոլորտի վրա նախադպրոցական հաստատության ղեկավարի կառավարման ոճի ազդեցության ուսումնասիրություն: Իրականացվել է փորձարարական ուսումնասիրություն, որը ներառում է առաջնորդների անձնական որակների, կառավարման ոճերի և թիմերի սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ախտորոշում: Մեկը անհրաժեշտ պայմաններըժամանակակից նախադպրոցական ուսումնական հաստատության

զարգացումը նախադպրոցական հաստատության զարգացման ուղիների ղեկավարի ռազմավարական տեսլականն է:
Ընդհանուր ռազմավարությունը սահմանում է պետությունը, հասարակությունը, հիմնադիրը և յուրաքանչյուր հաստատության, ներառյալ մանկապարտեզի ռազմավարությունը որոշելու ելակետ է: Հիմնված ընդհանուր ռազմավարություննախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավար ՝ հաշվի առնելով մշակութային, տնտեսական, սոցիալական զարգացումիր շրջանը, մշակում է հաստատության զարգացման հատուկ ուղիներ, որոնք նա ղեկավարում է: Նախադպրոցական հաստատության ղեկավարի ունակությունը ազգային, տարածաշրջանային առաջադրանքները ինտեգրելու նախադպրոցական հաստատության զարգացման ուղիների վերաբերյալ իր սեփական գաղափարին, առաջ է գալիս կառավարման գործունեության մեջ: Ռազմավարության ներքո այս դեպքըԸնտրված ցուցանիշների և ռեսուրսների արդյունավետ բաշխման վրա հիմնված կառավարման նպատակներին հասնելու համար անհրաժեշտ գործողությունների ընդհանրացնող մոդելը: Ռազմավարությունը գործողությունների ընդհանուր ծրագիր է, որը որոշում է հիմնախնդիրների և ռեսուրսների առաջնահերթությունները `հաստատության զարգացման հիմնական նպատակին հասնելու համար: Ռազմավարական կառավարումը ներառում է առաջնորդի `զարգացման նպատակները հստակ ձևակերպելու, ուրվագծելու ունակությունը ընդհանուր ծրագիրդրանց ձեռքբերումը, բացահայտել հիմնական խնդիրները, ապահովել անհրաժեշտ ճշգրտումներ կատարելու հնարավորությունը, օգտագործել ազդեցության տարբեր մեթոդներ: Հիմնական տարրերը ռազմավարական կառավարումռազմավարական կառավարման բաժիններ են, հաստատության գործունեության ոլորտները, փուլերը կյանքի ցիկլինստիտուտները, զարգացման ռազմավարության տեսակները, շուկայում մրցակցային դիրքը, հատվածացումը կրթական ծառայություններ... Կառավարման ռազմավարությունը կառուցվում է ՝ հաշվի առնելով դաշնային (նահանգային) և տարածաշրջանային կրթության մարմինների հիմնարար սկզբունքները, ինչպես նաև որոշակի մանկապարտեզի առանձնահատկությունները և նրա առաջնորդի անհատականությունը:
Նոր պայմաններում աշխատանքը ենթադրում է ուսուցիչների և սպասարկող անձնակազմի վերապատրաստում և վերապատրաստում, նրանց որոշակի հոգեբանական վերափոխում: Նախադպրոցական հաստատության ողջ անձնակազմը և նրա յուրաքանչյուր անդամ պետք է գիտակցեն, որ շուկայական պայմաններում կրթական ծառայությունը արտադրանք է, որը պետք է դառնա պահանջարկի առարկա, և դա մեծապես կախված է թե՛ մանկավարժների, թե՛ այլ աշխատողների աշխատանքի որակից

Նախադպրոցական հաստատությունների գործունեության և զարգացման նոր պայմանները պահանջում են նաև այդ հաստատությունների կառավարման նոր մեթոդներ: Վերջնական արդյունքը կախված կլինի առաջնորդի արհեստավարժությունից:Կառավարման պարտականությունների շրջանակը և որակավորման պահանջներՆերկայիս մանկապարտեզի ղեկավարին պարտադրված կատարողականը մեծ է:

Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարը պարտավոր է.Իրականացնել ուսումնական հաստատության ղեկավարում `համաձայն օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի, ուսումնական հաստատության կանոնադրության:վարկային հաստատություն;Ապահովել համակարգային կրթական և վարչական բայց - ուսումնական հաստատության տնտեսական (արտադրական) աշխատանքը.

- - ապահովել դաշնային պետական կրթական ստանդարտի, դաշնային պետության պահանջների կատարումը.
- - ստեղծել աշակերտների զորախումբ, ապահովել նրանց կյանքի և առողջության պաշտպանությունը ուսումնական գործընթացում, պահպանել նրանց և ուսումնական հաստատության աշխատակիցների իրավունքներն ու ազատությունները Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կարգով.
- - որոշել նախադպրոցական ուսումնական հաստատությունների զարգացման ռազմավարությունը, նպատակներն ու խնդիրները, ապահովել դրա աշխատանքի պլանավորումը, համապատասխանել ուսումնական գործընթացի պայմանների, կրթական ծրագրերի, ուսումնական հաստատության գործունեության արդյունքների պահանջներին: և կրթության որակի, տարբեր ծրագրերի և նախագծերի մասնակցություն, ուսումնական հաստատությունում կրթության որակի շարունակական բարելավում.
- - ապահովել նախադպրոցական ուսումնական հաստատություններում աշակերտների կրթության որակի գնահատման օբյեկտիվությունը.
- - ուսումնական հաստատության խորհրդի հետ միասին և հասարակական կազմակերպություններիրականացնել նախադպրոցական ուսումնական հաստատությունների, կրթական ծրագրերի, կանոնադրության և հաստատության ներքին աշխատանքային կանոնակարգերի զարգացման ծրագրերի մշակում, հաստատում և իրականացում.
- - պայմաններ ստեղծել նորարարությունների ներդրման համար, ապահովել նախաձեռնությունների ձևավորում և իրականացում նախադպրոցական տարիքի աշխատողներուղղված է հաստատության աշխատանքի բարելավմանը և կրթության որակի բարելավմանը, թիմում բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտի պահպանմանը:
- - ընդունել աշխատանքային օրենսդրություն պարունակող ուսումնական հաստատության տեղական կանոնակարգեր, ներառյալ վարձատրության համակարգ ստեղծելու մասին `հաշվի առնելով աշխատողների ներկայացուցչական մարմնի կարծիքը.
- - պլանավորել, համակարգել և վերահսկել աշխատանքը կառուցվածքային միավորներ, մանկավարժական և մանկապարտեզի այլ աշխատողներ;

- - ապահովել արդյունավետ փոխազդեցությունն համագործակցություն պետական իշխանությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների, կազմակերպությունների, հասարակության, ծնողների (նրանց փոխարինող անձանց), քաղաքացիների հետ.
- - ներկայացնել կրթական հաստատություն պետական, քաղաքային, հասարակական և այլ մարմիններում, հիմնարկներում և կազմակերպություններում.
- - նպաստել մանկավարժական, հոգեբանական կազմակերպությունների և մեթոդական ասոցիացիաների, հասարակական կազմակերպությունների գործունեությանը.
- - ապահովել նյութատեխնիկական բազայի հաշվառումը, պահպանումը և համալրումը, սանիտարահիգիենիկ ռեժիմի և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանումը, փաստաթղթերի հաշվառումը և պահպանումը, ֆինանսական և նյութական ռեսուրսների լրացուցիչ աղբյուրների ներգրավումը `նախատեսված գործունեության իրականացման համար: նախադպրոցական ուսումնական հաստատության կանոնադրությունը, ինչպես նաև հիմնադրին տարեկան հաշվետվություն ներկայացնելը ֆինանսական, նյութական ռեսուրսների ծախսման և ընդհանուր հաշվետվություն ուսումնական հաստատության գործունեության վերաբերյալ.
- - համապատասխանեն աշխատանքի պաշտպանության և հրդեհային անվտանգության կանոններին:

Իր լիազորությունների սահմաններում նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարը պետք է կարողանա կառավարել բյուջեի միջոցները, ապահովել դրանց օգտագործման արդյունավետությունն ու արդյունավետությունը, ինչպես նաև սահմանված ֆոնդերի սահմաններում `ստեղծել աշխատավարձային ֆոնդ՝ այն բաժանելով հիմնական և խրախուսական: մասեր

Նախադպրոցական հաստատության ղեկավարը նաև պարտավոր է.

- - հաստատել ուսումնական հաստատության կառուցվածքն ու կազմը.
- - նախադպրոցական ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան լուծել կադրային, վարչական, ֆինանսական, տնտեսական և այլ հարցեր.
- - պայմաններ ստեղծել աշխատողների շարունակական մասնագիտական զարգացման համար.
- - ապահովել ուսումնական հաստատության աշխատողների աշխատավարձի որոշակի մակարդակ, ներառյալ խրախուսման մասը (նպաստներ, պաշտոնական աշխատավարձերի լրացուցիչ վճարներ, աշխատողների աշխատավարձերի դրույքաչափեր), աշխատողների վճարած աշխատավարձերի ամբողջ վճար `սահմանված

ժամկետներում կոլեկտիվ պայմանագիր, աշխատանքային ներքին կանոնակարգեր, աշխատանքային պայմանագրեր;

- - միջոցներ ձեռնարկել `աշխատանքային պայմանների անվտանգությունն ապահովելու համար:

Այսօր նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարի որակավորման պահանջները նույնպես փոխվել են. Նրան անհրաժեշտ է բարձրագույն մասնագիտական կրթություն «Պետական և համայնքային կառավարման», «Կառավարման», «Անձնակազմի կառավարման» և դասավանդման աշխատանքային փորձի ոլորտներում: առնվազն 5 տարվա պաշտոններ, կամ բարձրագույն մասնագիտական կրթություն և լրացուցիչ պրոֆեսիոնալ դասընթացպետական և մունիցիպալ կառավարման, կառավարման և տնտեսագիտության ոլորտում և մանկավարժական կամ աշխատանքային փորձ ղեկավար պաշտոններառնվազն 5 տարի: Հասկանալի է, որ առաջնորդի արհեստավարժությունը չի կարող ինքնին առաջ գալ. Սա հետևանք է ոչ միայն մասնագիտական կրթության, այլև ինքնազարգացման և ինքնակատարելագործման խորը և հետևողական աշխատանքի:

Բյուջետային հատվածի բարեփոխումը ենթադրում է նաև ուսումնական հաստատությունների զարգացման ռազմավարության փոփոխություն: Շուկայական հարաբերություններ, որտեղ այսօր մանկապարտեզներ կան, նպաստում են ինչպես բուն հիմնարկի նորոգմանը, այնպես էլ առաջնորդի, այդ թվում և ռազմավարական, իրավասության բարձրացմանը:

ԳԼՈՒԽ 2 ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դաստիարակի մանկավարժական աշխատանքի պլանավորում

Թեման.<<Հովհաննես Թումանյանի հեքիաթները>>

Նպատակը

- Մեկ շաբաթում երեխաներին ծանոթացնել Հ.Թումանյանի կենսագրոգությանը ,,Անբան Հուռին», «Խելոքն ու հիմարը», «Կացին ախպերը» հեքիաթներին
- Երեխաներին պատկերավոր ցուցադրել հեքիաթները(նկարների միջոցով կամ մուլտֆիքմի)
- Խթանել երեխաների պատմելու կարողությունը
- Զարգացնել հերոսների տարբերակումը
- Ձևավորել վերջիններիս արժեհամակարգը, տալ գաղափար լավի. Վատի, չարի, բարու մասին:
- Ժամանակ հատկացնել խմբային խաղերին, ժամանցին ու ֆիզկուլտդադարներին:
- • Նպաստել սաների սոցիալականացմանը:
- • Խթանել հաղորդակցական ունակությունները, կարծիք, տեսակետ հայտնելու կարողությունը:
- Հարստացնել բառերի պաշարը

Պլանավորման խնդիրները

Կիրառել ժամանակակից մեթոդներ

Կազմակերպել ցուցադրական պարապմունք, որը կկրի ինտեցժգրված բնույթ՝ ներառելով հետևյալ բաղադրիչները՝

- • Երգ
- • Պար
- • Ասմունք
- • Բեմադրություն
- • Նկարչություն
- • Ապլիկացիա
- • կինոդիտում

Ակնկալվող վերջնարդյունքներ՝

- Ակնկալվում է սաների մեջ զարգացնել հետևյալ կարողունակությունները՝
- լեզվական և հաղորդակցական կարողունակություն
- ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն
- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
- մշակութային կարողունակություն

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, նախակրթական ուսումնադաստիարակչական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար հարկավոր է, որ մանկավարժական աշխատողը մանրակրկիտ պլանավորի իր աշխատանքը: Եթե նպատակ է դրվում սաների մեջ ձևավորել մի շարք առաջնային կարողունակություններ, որոնք սահմանված են կրթական չափորոշիչներով, ապա հարկ է, որ վերջինս դիմի ուսուցման նորարարական տեխնոլոգիաներին, քանի որ դրանք նպաստում են, որ սաները լինեն ավելի նախաձեռնող և ինքնուրույն:Բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը մանկապարտեզում նույնպես անկյունաքարային է, որը թույլ կտա սաներին սոցիալականացվել: Զբոսանքի, խաղի կամ ուսումնական պարապունքների ժամանակ հարկավոր է անդադար զրուցել սաների հետ, պարզաբանել այս կամ այն երևույթի մասին նրան հուզող հարցերը: Այսպիսով, դաստիարակը հիմք է նախապատրաստում, որ առաջիկայում նախադպրոցականն ունենա առաջընթաց ու կարողանա ձևավորել կապակցված խոսք, լինի ավելի ինքնուրույն ու կազմակերպված:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=67862
2. Ա. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն»:
3. . Ն. Մկրտչյան, «Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման մեթոդիկա», Երևան 2019